ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 07 օգոստոսի 2020թ.
ժամը 11:00

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3
ԵՊՀ-ԳՀԾՁԲ-20/139 ծածկագրով հայտերի գնահատման նիստի

ԵՊՀ-ԳՀԾՁԲ-20/139 ծածկագրով հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝
- հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ)՝ Թ. Համբարձումյան
- անդամներ (ԳՊ/ԲԱ)՝ Ա. Մարգարյան, Մ. Խաչատրյան
- անդամներ (ԳՊ/ԳԱ)՝ Լ. Գազարյան, Է. Թովմասով
- քարտուղար՝ Ց. Հակոբյան

1. Նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնահատման ընդհանուր համակարգը:

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը
1	*2*
Մասնագիտական փորձառություն	40
Աշխատանքային ռեսուրսներ	30
Գնային առաջարկ	30
Ընդամենը	100

2. Հանձնաժողովը գնահատեց «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով մասնակիցների ներկայացրած առաջարկները.

ա/ Մկրտիչ Սուրենի Մելքոնյան Ա/Ձ-ն հայտի մեջ ներկայացրել էր 2017 թ-ի հունվարի 12-ին կնքած պայմանագիր, որի շրջանակներում մատուցվել էր 3005117 դրամի ծառայություն, իսկ իր գնային առաջարկը 1740000 դրամ էր:
Հանձնաժողովը գնահատեց Մկրտիչ Սուրենի Մելքոնյան Ա/Ձ-ի որակավորումը «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով 40 միավոր:

բ/ ԳՐԻՏԻԳ ՍՊԸ-ն հայտի մեջ ներկայացրել էր 2018 թ-ի նոյեմբերի 19-ին կնքած պայմանագիր, որի շրջանակներում մատուցվել էր 1170000 դրամի ծառայություն և 2018 թ-ի մարտի 16-ին կնքած պայմանագիր, որի շրջանակներում մատուցվել էր 1300000 դրամի ծառայություն, իսկ իր գնային առաջարկը 2800000 դրամ էր:
Հանձնաժողովը գնահատեց ԳՐԻՏԻԳ ՍՊԸ-ի որակավորումը «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով 0 միավոր, քանի որ ներկայացված պայմանագրերից ոչ մեկը հավասար չէր գնային առաջարկի 50 տոկոսին:

գ/ «Բագարանի բարիք» ՓԲԸ-ն հայտի մեջ ներկայացրել էր 2019 թ-ի հուլիսի 16-ին կնքած պայմանագիր, որի գինն էր 2300000 դրամ: Պայմանագրին կից բացակայում էր որևէ փաստաթուղթ, որը կհաստատեր ծառայությունների մատուցված լինելը:
Հանձնաժողովը գնահատեց «Բագարանի բարիք» ՓԲԸ-ի որակավորումը «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով 0 միավոր:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

3. Հանձնաժողովը գնահատեց «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով մասնակիցների

ներկայացրած առաջարկները.

ա/ Մկրտիչ Սուրենի Մելքոնյան Ա/Ձ-ն ներկայացրել է ինժեներ-շինարարի տվյալներ, ում աշխատանքային փորձն է 17 տարի:
Հանձնաժողովը գնահատեց Մկրտիչ Սուրենի Մելքոնյան Ա/Ձ-ի որակավորումը «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով 30 միավոր:

բ/ ԳՐԻՏԻԳ ՍՊԸ-ն «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով առաջարկ չէր ներկայացրել:
Հանձնաժողովը գնահատեց ԳՐԻՏԻԳ ՍՊԸ-ի որակավորումը «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով 0 միավոր:

գ/ «Բագարանի բարիք» ՓԲԸ-ն ներկայացրել է ճարտարագետ-շինարարի և ինժեներ-շինարարի տվյալներ, որոնցից ամենամեծ աշխատանքային փորձ ունեցողը ուներ 10 տարվա փորձ:
Հանձնաժողովը գնահատեց «Բագարանի բարիք» ՓԲԸ-ի որակավորումը «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով 17.64 միավոր:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. Հանձնաժողովը գնահատեց մասնակիցների գնային առաջարկները:
ա/ Մկրտիչ Սուրենի Մելքոնյան Ա/Ձ-ն ներկայացրել էր 1740000 դրամի գնային առաջարկ: Իր գնային առջարկը գնահատվեց 30 միավոր:

բ/ ԳՐԻՏԻԳ ՍՊԸ-ն ներկայացրել էր 2800000 դրամի գնային առաջարկ: Իր գնային առջարկը գնահատվեց 18.64 միավոր: Գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

գ/ «Բագարանի բարիք» ՓԲԸ-ն ներկայացրել էր 2300000 դրամի գնային առաջարկ: Իր գնային առջարկը գնահատվեց 22.69 միավոր:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

5. Հիմք ընդունելով մասնակիցների ընդհանուր միավորները հանձնաժողովը որոշեց.

1-ին տեղ գրված և ընտրված մասնակից ճանաչել.
1-ին չափաբաժնի մասով Մկրտիչ Սուրենի Մելքոնյան Ա/Ձ մասնակցին: Ընդհանուր միավորները՝ 100:

2-րդ տեղ գրված ճանաչել.
1-ին չափաբաժնի մասով «Բագարանի բարիք» ՓԲԸ մասնակցին: Ընդհանուր միավորները՝ 40.33:
Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

6. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարվեց հրապարակել.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին
Ընթացակարգի ծածկագիրը ԵՊՀ-ԳՀԾՁԲ-20/139

7. Հաջորդ նիստի օր նշանակվեց 14 օգոստոսի 2020 թ.՝ ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ)՝	Թ. Համբարձումյան	ստորագրություն
Բացող անդամներ (ԳՊ/ԲԱ)՝	Ա. Մարգարյան	ստորագրություն
	Մ. Խաչատրյան	ստորագրություն
Գնահատող անդամներ (ԳՊ/ԳԱ)՝	Լ. Գազարյան	ստորագրություն
	Է. Թովմասով	ստորագրություն
Հանձնաժողովի քարտուղար (ՄՀմ)	Ց. Հակոբյան	ստորագրություն